Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 11

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց [1] նիստի

ք.Երևան 05 հունիսի 2020թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18–ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցության համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը: **Զեկուցող՝ Ա. Սաղյան**
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցելու համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը:

Ելույթ ունեցան՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն մասին, որ լրացել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի գործունեության ժամկետը

[1] Ելնելով ՀՀ-ում սահմանված Արտակարգ դրությունից՝ նիստն իրականացվել է առցանց

և նոր անդամների ընտրության համար ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պետք է ներկայացվեն նոր թեկնածուներ։

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, դոցենտ Ս. Ափոյանը, Ֆարմացիայի ինստիտուտի ՈՒԽ նախագահ, 3-րդ կուրսի ուսանողուհի Է. Մարկոսյանը, ովքեր առաջարկեցին Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ. գ. դ. Ռուբեն Հովհաննեսյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով վերջինիս հարուստ գիտամանկավարժական փորձը և մարդկային բարձր որակները։

Որոշեցին ՝ (բաց քվեարկությամբ – կողմ՝ 16, ձեռնպահ՝ 2, դեմ՝ 0) առաջադրել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ. գ. դ. Ռուբեն Հովհաննեսյանի թեկնածությունը՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցելու համար։

2. Ընթացիկ հարցեր։

Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեցին Ֆարմացիայի ինստիտուտում առցանց եղանակով ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքները։ Ելույթ ունեցավ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն ք.գ.թ. դոցենտ Ս. Վարդապետյանը, նշեց, որ պաշտպանությունները անցել են բարձ մակարդակով, լավ կազմակերպված, և՛ ուսանողները և՛ դասախոսները գոհ են եղել արդյունքներից։

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դաղայան